# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՊՐՈՖՏԵՍՏ ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2025/16-4-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 25 | Abbott Vascular | Xience Pro | Xience Pro | Abbott Vascular | Ստենտի նյութը՝ կոբալտի-քրոմի համաձուլվացք, ստենտի ծածկը՝ Էվերոլիմուս արտազատող ծածկ: Ստենտի կառուցվածքը լազերով կտրված կոբալտ-քրոմային գլան: 2.5-3.0 մմ տրամագծով ստենտը ունի երեք կարճ և երեք երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: 3.5 մմ-ոց ստենտն ունի երեք կարճ և վեց երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: Ստենտի եզրային օղը ձևավորված է սիմետրիկ ամրակներով՝ բարելավելու ուղղորդիչ կաթետերի դուրսբերումը: Ստենտի պատերի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հաստությունը` 0.0032”: Ստենտի երկայնածիգ ճկունությունը գերազանց է: Ստենտը ոչ ֆեռոմագնիսական է և ունի բարձր ճառագայթային ուժ։ Մետաղական մակերեսի ընդարձակում - 13.3% -ի սահմաններում 3.0 մմ տրամագծի դեպքում։ Անկախ լայնացման աստիճանից չի գերազանցում ստենտի երկարության 5%-ը: Բալոնի ճնշման ցուցանիշները` 8 մթն 2.5-2.75 մմ տրամագծի ստենտերի համար 10 մթն 3.0-3.5 մմ տրամագծի ստենտերի համար: Ստենտի բացման նոմինալ ճնշումը` 12 atm պայթման առավելագույն ճնշումը` 18 atm (բոլոր տրամագծի ստենտերի համար)։ Բալոնի նյութը բազմաշերտ պեբաքս։ Ուղղորդիչ կաթետերի ներքին նվազագույն տրամագիծը մինչև 0.056 դյույմ կամ 1.4 մմ (բոլոր չափսի ստենտերի համար): Ստենտի դեղորայքային ծածկը բաղկացած է ակրիլային և ֆլուորո պոլիմերներից, որոնք օգտագործվում են են անոթային կարի համար նախատեսված թելերի արտադրությունում: Դեղանյութի կոնցենտրացիան ստենտի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մակերեսին` 88 մկգ/սմ2 ։ Կախված վիրահատվող անոթի տրամագծից ստենտի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի` 2.5, 2.75, 3.0, 3.5 մմ։ Ստենտի երկարությունը` 48 մմ։ Ֆորմատ` հատ։ Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK որակի վկայականների առկայությունը պարտադիր է։ Նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ։ Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները` գործարանային ձեռնարկի ձևով։ Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն։ Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը։ Պարտադիր պայման է հանդիսանում` Մասնակիցը հայտով ներկայացնում է` ապրանքը արտադրողի կողմից |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ներկայացվող ավտարիզացիոն նամակ (երաշխիքային-լիազոր նամակ): Պարտադիր պայման է հանդիսանում` մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է` 1. ապրանքը արտադրողի կողմից ներկայացվող ծագման սերտիֆիկատ և համապատասխանության հավաստագիր: 2. ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ: Նշված երաշխիքային նամակով արտադրողը երաշխավորում է մատակարարի կողմից Հայաստանի Հանրապետություն մատակարարվող ապրանքը, ընդ որում ապրանքն արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի երաշխիքային նամակում հստակ պետք է երևա` մատակարարի, մատակարորվող ապրանքի անվանումները և երկրի անվանումը որտեղ նշված մատակարարի կողմից վաճառվող ապրանքը երաշխավորվում է արտադրողի կողմից: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ПРОФТЕСТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2025/16-4-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 25 | | | | | |